

նէր ոյժ վրայ զօրավիզն ըլլալու. այս պատճառաւ ալ փորձեց նախ դրամով հոնական աղբերը կոտել ասպարէզ իջնելու. եւ երբ ձախողեցաւ փորձը՝ Պետրոսի հրամանատարութեան տակ սակաւածեոն գունդ մը դէպի Լազիստան ձանապարհ հանեց, օգնութեան հասնելու վրացիներուն: Բայց շատ տկար էր այս ոյժը գիմաղբել կարենալու համար պարսկական բանակին, որ այժմ Բոյէսի հրամանատարութեան տակ կը մերձենար վրաստանի սահմաններուն: Չուր տեղ կը ջանար Յուստինոս համոզել Լազերը, որ պաշտպան կանգնին իրենց Երկրին. անոնք յանձն առին պաշտպանել այն Երկու ամրոցները միայն, որոնք կը փակէին վրաստանէն Լազիստան տանող ձանապարհները: Կը յուսացուէր թէ Լազերը գէթ յանձն պիտի առնեն պաշար հայթայթել զօրքին, որ կը գտնուէր այս վայրի եւ անբերրի կողմերը: Եւ որովհետեւ նաեւ այս կէտին մէջ ըստ յուսացուածին չեղաւ, հարկադրուեցաւ բնակչութիւնը ետ քաշուիլ: Գուրգէն թագաւոր, իրեն հետ բազմաթիւ վրացի նախարարներ առած իրենց ընտանիքը փախան հողմէական հող: Այսպէս առանց գոտարութեան տիրացաւ պարսիկը վրաստանի եւ Լազիստանի:

Գուրգէն եւ փախստական նախարարները գտան Կայսեր քով ապաստանարան, ուր եւ մնացին այնուհետեւ:

Ուրիշ համանուն վրացի իշխան մըն ալ կը յիշուի 572ին, նոյնպէս փախստական մը ի Կ. Պոլիս. այս մասին պիտի խօսինք յետոյ առանձին:

Առանց տարակուսի այս դէպքերէն մէկն է, զոր կը յիշեցնէ Եղիշէ:

Խոսրով Ա. է սպառնացող թագաւորը:

29. «ԵՂՐԱՐԲ ԱՐԲԱՅԻՅ ԱՐԲԱՅԻՆ»

Եղիշէ, Բ. էջ 18 կը կարդանք տողերս «Նաեւ ոչ գերկրաւոր վաստակս ուրուք յիշէր (արքայից արքայն). եւ որ մեծն քան գամեայն է ըստ մարմնաւոր կարգի, քանզի գոյին ոմանք ի նախարարացն Հայոց, որոց գեղարս նորս սնուցեալ էր մայրենի կարամբ իւրեանց, առաել եւս քան գամեանս սեան գնոսս դատէր»:

Կը գանգատի պատմադիրը, թէ թագաւորը կը հարածէ հայ նախարարները՝ անտես ընելով այն մտերմական կապը, զոր ունէին անոնք թագաւորական ընտանիքին հետ շնորհիւ իրենց մայրերու, որոնք ժամանակ մը

մայրական կաթով սնուցած էին արքայորդիները, թագաւորին համարին եղբայրները. եւ դարձեալ թէ թագաւորը իւր վայրագութեամբը չի գնահատեր նախարարներու մեծամեծ ծառայութիւնները, եւ ամէնէն աւելի անոնց հանդէպ գտնուած է խիստ եւ անագորոյն:

Եթէ հոս խօսքը Յաղկերտ Բ. ի մասին է, պէտք է ենթադրել, թէ «արքային եղբայրները» վրամ Ե. ի զաւակներն են: Բայց ի՞նչ առթիւ կարող էր վրամ Ե. պատահութիւն ընծայած ըլլալ հայ տիկիներուն ստնտու ըլլալու արքայորդիներուն: Դժուար է Ե. դարու առաջին կէտին վերհանել առիթ մը, երբ վրամ Ե., որ իւր մանկութիւնն անցուցած էր Տաճկաստանի մէջ եւ տաճկուհիներու կաթով սնած, Հայաստան եկած ըլլայ իւր բամբիշներով եւ մատաղօրեայ զաւակներով եւ այսպէս յանձնած ըլլայ հայ մայրերուն կաթնասուն մեծցնել զանոնք: Միակ պարագան, որ կրնար զվրամ Ե. Հայաստան բերած ըլլալ, է 421ի պարսկահռոմէական պատերազմը: Բայց թէ այս արշաւանքին ձանապարհը Հայաստանէն անցաւ, չուներք տեղեկութիւն. եւ անհաւանական ալ կ'երևայ: Միւս կողմէն ծանօթ չէ նաեւ Յաղկերտ Բ. ի կեանքէն դէպք մը, ուր դուրս կարկառի թէ հայ նախարարներուն, 450էն յառաջ, երախտամոռաց, նոյն իսկ սարչնորձ վարմունք ցուցուցած ըլլայ. ընդ հակառակին կը վկայէ Ղ. Փարպեցի թէ Յաղկերտ հիացմունքով խօսած է միշտ վարդանի քաջագործութիւններու մասին:

Պէտք է յանձին արքայից արքայի դարձեալ Խոսրով Ա. նկատել: Այս դէպքին իր եղբայրները կ'ըլլան Կաւատի, Պերոզի որդւոյն զաւակները: Կաւատի պատմութեան մէջ աչքի կը զարնէ կէտ մը, որ կարող է հնարաւոր ցոյց տալ պատմագրին հաւատարմը:

501 Օգոստոս 22էն յառաջ կնքած էր Կաւատ վահան Մամիկոնեանի հետ հաշտութիւն եւ զինակցութիւն: Վահան յանձն առած էր կոտել Պարսից կշտին: Կաւատ անձամբ բանակի գլուխն անցած՝ շարժած էր զօրքը Հայաստանի վրայէն դէպ ի հողմէական Հայաստան եւ գրաւած Կարինը: Եւ որովհետեւ Սասանեանները սովոր էին իրենց արշաւանքներու ժամանակ առնել իրենց հետ կանանին ժանուարներով, ուստի զիւրին է մտածել թէ Հայաստանէն անցնելու ժամանակ յանձնած ըլլայ Կաւատ նորածին ար-

քայորդիներու խնամքը հայ նախարարներու տիկիանց՝ կաթնարուծելու: Տարբեր հարց էր ի հարկէ, թէ հայ մայրերը պիտի ուզէին կաթնարուծել մաղղեղեան մը, եւ կամ մոգերը պիտի հանդուրժէին որ արքայածին զաւակները սնանէին քրիստոնեաներու կաթով. թէ եւ Կաւատի կիներէն մին, որմէ ծնաւ Խոսրով Ա., քրիստոնեայ էր կ'ըսուի¹: Տարբեր Կաւատի զաւակներու թիւը 10 կը հաշուէ:

531ին, երբ Խոսրով Ա. ձեռք բերաւ արքայական թագը, առաջին գործը ըրաւ բնաջնջել անձխալ իր եղբայրներն եւ անոնց համամիտ աւագանին: Բնակահարար այս առթիւ խիստ վարուած պիտի ըլլայ նաեւ հայ նախարարներու հետ, իրրեւ կաթնակեր ընկերներ արքայորդիներու: Կարելի է նաեւ մտածել թէ երբ Անուշաղատ յեցած երկրին քրիստոնեայ տարրներու վրայ ապստամբեցաւ հօրը դէմ եւ փորձեց թագը յինքն կտրել, թերեւս նաեւ հայ նախարարներէն ոմանք ի մերձուստ կամ ի հեռուստ մեղսակցութիւն մը բերած ըլլան եւ այսպէս արժանացած Խոսրովի խիստ դատաստանին²: Ասոնք հնարաւոր են:

Բայց կը թուի ինձ թէ ամբողջ այս հատուածին մէջ խանգարուած է սկզբնաղբիւրը խմբագրէն: Պատմութեան կարգին համաձայն վաղաժամ է դեռ հայ նախարարներու երեւումը պատմական բեմին վրայ: Սկզբնաղբիւր Եղիշէի ծրագիրն էր ներկայացնել նախ Խոսրովի բնութագիրը, անոր կեանքը իւր սեպհական տան եւ սեպհական երկրին մէջ: Այս առաջին շրջանը Խոսրովի թագաւորութեան ներկուած է արեամբ: Չէր կրնար պատմագիրը առանց յիշատակելու թողնել Կաւատի որդիներու եւ թոռնիկներու տակահոտոր բնաբարձումը. աւագ նախարարներու, բազմապատակ զօրավարներու սպանութիւնը: Սպանուեցան ոչ միայն Կաւատի որդիները, այլ եւ Խոսրովի մօրեղբայրն՝ Ասպահապետը³, արդիւնաւոր նախարարը Մով-

բեղէս (Մովսէս), մեծ զօրավարն Ատրպուղուժբաղէս եւ ուրիշ շատերը: Կը յուսար Խոսրով թէ այսպիսի ընտիր արիւնով զանգուած հողի վրայ ապահով պիտի ըլլար իւր դահը: Բիշ յետոյ առթիւ իւր որդւոյն Անուշաղատի ապստամբութեան պէտք զգաց ուրիշ աւագներ ալ զոհել Խաղամանուոյն:

Ահա այս մարդախոշոզ բռնաւորին իր եղբայրներու եւ նախարարներու հանդէպ կատարած անագորոյն գործերը կ'ախարհկեն պատմագրին տողերը, անոնց հանդէպ, որոնք բազմապատակ եղած էին թէ իրենց արիական գործերով, եւ թէ ընտանեկան կապեկան գործերով, եւ թէ ընտանեկան կապեկան զործերով, եւ թէ ընտանեկան կապեկան զործերով: Ուստի «գոյին ոմանք ի նախարարացն Հայոց (կարգա՛ Պարսից), որոց զեղբարս նորս անուցեալ էր մայրենի կաթամբ իւրեանց» միայն այս մեկնութեամբ կ'ընդունի իմաստ եւ պատմական դիմ:

(Շարունակելի:) 2. Ն. ԱԿԻՆՅԱՆ



ՀՆՁՐԱՐԱՆՆԵՐ ԳԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ո, ու (Շարունակութիւն:)

Ս. Մեսրոպն ի՞նչպէս էր հնչում իր հնարած ո գիրը. ո թէ՞ օ: Որքան գիտեմ այս հարցը յատուկ հետազոտութեան նիւթ չէ դարձած: Բայց մի որոշ կարծիք իշխում է գիտունների շրջանում: Կարծում են, որ է գիտունների շրջանում: Կարծում են, որ մեր ո-ն ունէր օ հնչում եւ հետեւապէս նրա հնչումի մէջ այսօր նկատուող Վ ձայնը յետին ժամանակների արդիւնք են համարում: Թուում է թէ այս կարծիքը երեք հիմք ունի: ա. Մեր դասական տառադարձութիւնը, ուր յուն օ-ի դէմ գրած են ո: բ. Լեզուագիտութեան մասնանշած կշիռները, ուր քոյր լեզուների օ-ի դէմ հայն ունի ո. այսպէս՝ բառա-

¹ Die sogenannte Kirchengeschichte des Zacharias Rhetor, S. 175:
² Բայց նկատելի է որ ճիշդ այս պահուն Հայոց կաթողիկոս հռոմէական զօրավարին կ'ուղարկուի զինագազար կամ հաշտութիւն խնդրելու (Պրոկոպ.):
³ Ասպահապետ (Ἀσπασβηδης), որ 502էն սկսեալ մինչեւ Խոսրովի գահակալութիւնը մեծ դեր խաղացած էր, ըստ Պրոկոպիոսի (Պարսկ. Ա., 11) Խոսրովի մօրեղբայրն է: Տարբեր, ինչպէս կ'երևայ, գիրքը Խոսրովի պապը կը ճանչնայ: Նաեւ Ջամ Զն-

այս Խոսրովի կողմը, կը համարուի Ասպահապետի թերթիկ (Nöldeke, Tab. 147, 3, 1): Խոսրովի եղբայրներէն երեցագոյնն էր Կաւատ (Καὼσης), որ ըստ Մարկուարտի (Eranšahr, 130, 8. 6) ծնած էր Ջամրիկէն, Կաւատի առաջին կնոջմէ, 496էն յառաջ: Մալաթիա (Բ. էջ 174) կը յիշէ Կաւատի որդիներէն նաեւ Քսերքէս մը եւ Պերոզ մը: Ասպահապետի մերձաւորութիւնը արքայական տան կ'արդարացնէ Եղիշէի խօսքերուն ճշմարտութիւնը:

սկզբում. ուստ — յուն. ὄσος. անդս. օst, որք — յուն. ὄρφανός: Բառերի միջին. նոր — լատ. novus, հոստ — լատ. odor¹: Գ. Մեր բարբառների արտաբերությունը. օսկ, օսկի, խօտ (ոտ, ոսկի, խոտ):

Բննենք այս հիմքերը. եւ տեսնենք թէ ի՞նչ է նրանց ապացուցական արժեքը:

ա. Տառադարձութիւն: Երեւակայէք մի վայրկեան, որ մի ուսու մարդու տալիս ենք իրան շատ լաւ ծանօթ մի քանի անուն արեւմտահայ տառադարձութեամբ եւ ասում ենք, որ այդ հիման վրայ կազմէ հայերէն գրերի հնչական կշիռները եւ գրում ենք. Կոկոլ, Տոսթուսքի, Թոլթոյ: Նա մեզ կը տայ այսպիսի կշիռներ. Կ — ց, ք — ճ, ք — տ, ք — կ: Նրա մտքով անցնել չի կարող, որ մեր կ-ը ց չէ եւ ոչ տ-ը՝ դ, կամ ք-՝ տ եւ ք-ն՝ կ: Փոխադարձաբար մի ուսուերէն չիմացող հայ մարդու տանք մեր մի քանի գիւղերի անունները, բայց ուսուերէն տառադարձութեամբ եւ առաջարկենք որոշել ուսու գրերի ձայնական արժեքը եւ գրենք. Παραкар, Чочкан, Цатер (Փարաքար, ձոճկան, Ծաթեր). նա մեզ կը տայ հետեւեալ կշիռները. ք — փ, կ — ք, ց — ֆ, ց — ֆ, ք — ճ, ք — տ. Եւ բնաւ չի կարող կարծել, որ ուսուր ո՛չ փ ունի, ո՛չ ք. ո՛չ ֆ, եւ ոչ ճ կամ ք: Կարելի՞ է այս տառադարձութեան հիման վրայ միշտ դադափար կազմել երկու ազգերի ձայնական գրութեան մասին. կարելի՞ է պնդել, որ ուսուի ք-ն ճ է կամ հայի ք-ն՝ տ: Ամենաշատ կարելի է ասել, որ ուսուի ց գիրը մեր ֆ-ին մերձաւոր մի հնչիւն է, բայց պնդել, որ նա ֆ է՝ ոչ ոք կարող է հաստատուիլ:

Այսպէս է մեր ո-ի պարագան: Ոչ ոք կարող է պնդել, որ մեր ո-ն հնչում էր օ՝ հիմք ունենալով միմիայն այնպիսի հանգամանք, ինչպէս, օրինակ, Եւսերիոս Կեսարացու ժամանակագրութեան դասական թարգմանչինն է, որ յուն. ὀλυμπιάς բառը տառադարձած է Ողովպիաղ: Այսպէս գնալով կարող ենք ասել, որ մեր ո-ն ունեցած է եւ յուն. օ եւ յուն. օ գրի ձայն, քանի որ թարգմանիչը մի եւ նոյն ո-ն է գրած եւ օ-ի եւ օ-ի գրմաց: Ազգերը տառադարձում են իրենց ունեցած ձայներով: Վրացին կարող է մեր ֆ-ի բառն ուղիղ տառադարձել, որով-

¹ Բուրք կշիռների համար տես. H. Hübschmann, Armenische Grammatik:

հետեւ իր ձայնաշարի մէջ նա ունի եւ ֆ եւ օ. Բայց պարտիկը գրելու է չիք, որովհետեւ ոչ ֆ ունի ոչ տ: Եւ այդ է պատճառը, որ թրքախօս հայն ասում է ինչ (ինձ), որովհետեւ թուրքը ձ չունի: Այսպիսով դասական տառադարձութեան մէջ տեսնելով յուն. օ-ի դէմ հայերէն ո՝ դրանով մենք իրաւունք չենք ստանում այն պնդել թէ մեր ո-ն Ս. Մեսրոպը օ էր հնչում: Եթէ ընդունենք մի վայրկեան, որ Ս. Մեսրոպը ժամանակ հայերէնը օ չունէր եւ միակ մերձաւոր հնչիւնը ո-ն էր, ուստի եւ այդ գիրն է գրուած յուն. օ-ի դէմ՝ դրանով միանգամից մերժած կը լինինք տառադարձութեան ապացուցական կարողութիւնը մեր խնդրի քննութեան համար: Տեսանք, որ ուսուի եւ չունենալով ոչ ֆ ոչ ճ, իր ունեցած մերձաւոր ձայներով է տառադարձած մեր հնչիւնները գրելով չ եւ ց: Սրանից պարզ երեւում է, որ տառադարձութեան քննութիւնը մեզ չի կարող ստոյգ գիտութեան առաջնորդել եւ հետեւապէս իրր հիմք առնուել ո-ի հնչումը ստուգելու ժամանակ:

բ. Համեմատական կշիռներ: — Ահաւասիկ մի քանի կշիռներ. որժամ. — լատ. erugo, յուն. ἐρεύγομαι. որով՝ ո — լատ. օ, յուն. ε. — Ռջ. — յուն. οὐχ, որով՝ ո — օ. — Ողք. — յուն. ὀλοφύρομαι. որով՝ ո — : Կարելի՞ է այս հիմքերով, որոշել մեր դասական ո-ի հնչումը. ի՞նչ էր նա. օ, օ, օս թէ՞ օ: Եւ յետոյ խնդիր է թէ ի՞նչ է բուն իսկ յոյն օ հնչումը, որին յենուելով՝ ոմանք կամենում են մեր ո գրի հնչումը որոշել: Յոյնը Վ ձայնը չունի. հետեւապէս իր օ-ն մաքուր է Վ կցորդից. նա չունի ո (vo): Բայց չի՞ ունեցած. ահաւասիկ χλεός բառը (աղմուկ, հոչակ, փառք). մենք այստեղ տեսնում ենք մի մաքուր օ: Բայց հին արձանագրութիւնները տալիս են χλεFos², ուր F մի W է եւ ուրեմն wo խումբը՝ մի ո: Եթէ այս բառը մերոնք տառադարձէին՝ պիտի գրէին Կլէուս եւ այս գրութեամբ աւելի հաւատարիմ կը լինէին յոյն լեզուի անցեալին քան բուն իսկ ինքը յունարէնը: Կամ առնենք մեր վէպ բառը եւ դուզադրենք յուն. έπος բառին: Թուում է թէ սրանք տարբեր բառեր են: Բայց եթէ նկատի ունենանք, որ ք. Ա. VI դարի հին արձանագրութիւնները

² Տես A. Meillet, Traité, § 59, էջ 44:

տալիս են Բεπος, այն ժամանակ կը տեսնենք, որ երկու բառերը լիովին ծածկում են իրար իրր կշիռներ: Կարելի՞ է այս հիման վրայ ասել, որ մեր վէպ բառի Վ հնչիւնը յետոյ մտած է, որովհետեւ յոյնը է ունի եւ ոչ Վ: Ինչպէս յոյնի է ձայնը գրուած է իր Վ կցորդից եւ դուած է έπος բառի մէջ, ինչպէս ՎO խումբը դարձած է օ՝ χλεός բառի մէջ, այնպէս կարող են լինել եւ կան շատ օ-եր, որ նախապէս ՎO են եղած: Երկու լեզուների ներկայ կացութիւնը հաւատարիմ պատկերը չէ անցած ու մտցուած դարերի: Յոյնը ք. Ա. V դարում արդէն անցած էր եւ ալրած լեզուի դարձացման այն փուլը, որ մեր բարբառներից մի քանիսը նոր են անցնում ո-ն օ հնչելով բառամէջերին, իսկ մի քանիսը հասած են արդէն՝ ոսքը, օսք արտաբերելով բառասկզբին: Լեզուագիտութեան կշիռները չեն կարող որոշել մեր ո-ի դասական հնչումը: Նրանց վրայ յենուած՝ ամենաշատը կարող ենք ասել, որ քոյր լեզուների օ-ի դէմ հայն ունի ո, հետեւապէս ո-ն օ ձայնի երանդ ունէր. բայց այդ խախտու հիմքով ոչ ոք կարող է վճռապէս պնդել, թէ մեր ո-ն Ս. Մեսրոպի ժամանակ օ էր հնչում եւ ոչ ՎO կամ ՎO: Համեմատական կշիռներով մենք կարող ենք իմանալ թէ մեր ո-ն քոյր լեզուների ո՞ր ձայներին է կշռում. բայց մենք ստուգապէս չենք կարող ասել թէ ի՞նչ էր նրա հնչումը մեր Ոսկէզարում:

գ. Բարբառական արտաբերութիւն: Կան բարբառներ, որ մեր դասական ո գիրը թէ՛ բառի սկզբում եւ թէ՛ միջին արտաբերում են օ (օսկի, մօլոր — ոսկի, մօլոր). կան, որ բառի սկզբում արտաբերում են ՎO, իսկ բառի միջին՝ օ. այդպէս է եւ դրական արտաբերութիւնը (ոսկի, մօլոր): Կան բարբառներ որ թէ՛ բառի սկզբին եւ թէ՛ միջին արտաբերում են ուօ, ուր ու-ն մի խուսափուկ հնչիւն է. մի տեսակ ք (քօ): Եկեղեցին բառակերպին արտաբերում է օ (ուսօ՛, ապրեցօ՛ — ուսօ՛, ապրեցօ՛): Այսպիսով մեր բարբառները մի եւ նոյն ո գրի համար տալիս են երեք հնչում. օ, ՎO, քօ, մեր ոս(ն) բառն արտաբերում են. օտ, vot, քօտ. իսկ հար բառը. hor, քօor: Ո՞րն է սակայն այս երեք արտաբերումներից հնազոյնը եւ դասականը: Երեքն եւս գալիս են խորին անցեալից. ո՞րն է սակայն, որ բերում է մեկ Ս. Մեսրոպի հնչումը: Ի՞նչ ուղղութիւն

պէտք է տամ հուլովոյթի ընթացքը նիշող սրբին. ՎO → օ թէ՞ օ → ՎO. ՎO-ն է, որ լերկացած է թէ՞ օ-ն է, որ կցորդ է ձեռք բերած: Ոչ ոք կարող է ստուգապէս ասել՝ յենուած դաւառական արտաբերութեան: Երեք արտաբերութիւնն եւս հաւասար իրաւունք ունին Մեսրոպեան համարուելու:

Ինչպէս տեսանք երեք հիմքն եւս խախտու են իրր ապացոյց. նրանք վնասական նշանակութիւն չունին: Նրանք կարող են օժանդակ ապացոյցի դեր խաղալ, երբ մի ուրիշ, աւելի ազահով ճամբով կարողանանք լուծել ո գրի հնչման խնդիրը: Այդ երեք «հիմքերին» ծանօթանալուց յետոյ եւս մենք կեցած ենք նոյն տեղը, ուր էինք. մենք չզիտեսնք թէ ի՞նչ էր ո գրի հնչումը Ս. Մեսրոպի ժամանակ:

Փորձենք խնդրին մօտենալ ուրիշ կողմից: Մեր ոս(ն) եւ ոքիլ (թափել, հեղուկի համար են ասում) բառերը դաւառներում արտաբերում են տարատեսակ: Ահաւասիկ մի դուզադրութիւն.

ոս. — vot, vit, vut, *vot
ոքիլ — voth, vith, — veth, vayth, vath:

vot եւ voth — այդ բառերի սովորական արտաբերութիւնն են: Գամառ-Քաթիլյան գրում է.

Աչակերտին հարցուցէք. —
Ո՞րքիլ գիտէ՞ նա արիւն՝³.

vit — արտաբերում է Քեսաբի բարբառը.
vut — Թիֆլիս. *vot. — Արցախի բարբառը դասական տն խումբը արտաբերում է իրր ննր. մատն — մաննր. ոսն — ոննր⁴, ու նանե՛ վէննր. վերջինը ծագում է ուրեմն *վէտնր ձեւից, որ եւ դրած եմ վերը, յապակելով նր վերջաւորութիւնը: Գանձակի բարբառն արտաբերում է vot:

vith — Սայաթ-Նովան գրում է.
Մի՛ վիթի արունդ, մի՛ շանց տայ մահդ (երգի). այսինքն՝ «Մի՛ թափեր արիւնդ, մի՛ ցոյց տայ մահդ»: veth — գտնում ենք «Ջրվէթ» բառի մէջ, որ նշանակում է. «միգել»՝ այդ նոյն բառն ունինք եւ «Ջրվաթ»

³ Բանաստեղծութիւններ, էջ 140, 1888 թ.
⁴ Տես H. Adjarian, Classification des dialectes arméniens, էջ 29:

ձեռով, ուր տեսնում ենք. vath — vayth — (վայթել) տալիս է Առձեռն բառգրքը: Չգիտեմ ինչու Առձեռն գրում է վոթել, փոխանակ որի գրելու:

Քննելով այս տարատեսակ արտաբերումները՝ մենք տեսնում ենք, որ ամեն տեղ v ձայնը մնում է անփոփոխ եւ օ ձայնն է, որ դառնում է i, ē, ay, a, u: Սա նշանակում է, որ մեր n-ն երկձայն է. նա մի v է եւ մի օ. եւ ի դուր չէ, որ իր անունը vo է⁵: Այդ երկու ձայները իրանց պահում են անկախ. մինչդեռ մէկը — օ-ն — փոփոխում է բարբառից բարբառ, միւսը՝ — v — մնում է անփոփոխ կամ չքանում է լիովին՝ մերկացնելով vo հնչումը եւ դարձնելով մաքուր օ, ինչպէս եղած է յունարէնի մէջ (Fo → օ):

Քննենք մի ուրիշ երեւոյթ: Երեւանի բարբառը hn դասական խումբն արտաբերում է իբր ֆօ: Այսպէս՝

- hnqի, hnp, hnu
- ֆօֆի, ֆօր, ֆօտ:

Նոյն ձայնաշարումն ունի եւ Կարնոյ բարբառը⁶: Բայց Երեւանցին ասում է. «հօրս տունը», «ինձ հետ դնաց», «մի հատիկ», «հնգեր» (ընկեր), «հունար». այսինքն հ-ն արտաբերում է անփոփոխ օ, ա, ե, ը եւ ու ձայնաւորներից առաջ: Պարզ է, որ hn-ն հնչում է ֆօ այն պատճառով, որ h-ից յետոյ գալիս է n եւ ոչ ուրիշ ձայնաւոր: Յատկապէս նշանակալից է «հօր» եւ «հոր» բառերի արտաբերութիւնը. երկրորդը հնչում է ֆոր. մինչդեռ պէտք է որ հնչէր hnp եթէ իրօք n գիրը օ հնչում է ունեցած, որովհետեւ այն ժամանակ տարբերութիւն պէտք չէ որ լինէր n եւ օ գրերի հնչական արժէքի միջեւ: Բայց գրանք տարբեր ձայներ են եղած. հօր ձեւը մի հին հար է. հետեւապէս հին ժամանակ h-ից յետոյ գալիս էր ա (հար): Դարեր յետոյ նոյն h-ից յետոյ գալիս էր մաքուր օ (հօր): Ո՛չ ա-ն եւ ոչ օ-ն n չեն եղած, ուստի եւ հար եւ հօր բառերը մնացած են անփոփոխ h հնչումով, մինչդեռ hnp բառը դարձած է ֆօր: Ինչո՞ւ: Որովհետեւ օ-ն մաքուր օ է, իսկ n-ն երկ-ձայն vo: Փորձեցէք արտաբերել n-ն իբրեւ

⁵ Ո՞վ է գրել մեր գրքի անունները. Ս. Մեսրոպը. n գրի անունն իսկ կարող է մի անուղղակի պայացող համարուել, որ այդ գիրը օ չէր հնչում: ⁶ H. Adjarian, ibid., էջ 16 եւ 45:

vo եւ հնչէք հետեւեալ բառերը. հոֆի, հօր, հօտ, հօս եւ դուք իր տեսնէք թէ ինչպէս ձայների բնական ձուլումով դուք արտաբերում էք.

- ֆօֆի, ֆօր, ֆօտ, ֆօս (հոս):

Այստեղից պարզ երևում է, որ մեր n-ն հին ժամանակ օ չի եղած, այլ vo եւ նրա v կցորդն է, որ ձուլուելով նախնից հ-ի հետ՝ տալիս է ֆ: Ահա թէ ինչո՞ւ ho խումբը մնում է ho, իսկ hn խումբը դարձած է ֆօ, որովհետեւ օ-ն մաքուր ձայն է, իսկ n-ն ունի մի կցորդ v, որ h ձայնի հետ կազմում է hv խումբը, իսկ սա տալիս է ֆ:

Ահաւասիկ մի օրինակ, որ պարզ ցոյց է տալիս թէ ֆ-ն ծագում է hu խմբից: Հաւաքելով այս բառն արտաբերում է յարաչեշտ, իբր՝ «հաւաքել», ուստի սղած է իր առաջին ա-ը եւ դարձած է հրաքել: Այս արտաբերութեան մէջ ը-ը դգալի մեծութիւն է, ուստի կարողանում է դատել h եւ չ ձայները: Ը-ը քիչ աւելի սղելով՝ բառը տեղ-տեղ արտաբերում է իբր հաքել, բայց մի խուսափուկ ը-ով: Վերջապէս չքանում է նաեւ այդ խուսափուկ ը-ը եւ h եւ չ դառնում են անմիջօրէն դրկից եւ ձուլում են իբրար՝ տալով ֆ ու բառը հնչում է իբր ֆաքել. «ֆաքել», այսինքն՝ «հաւաքիլ» — լսած եմ վայոց ձորի Այնաղուր գիւղում (հին Աղանաձոր)⁷:

Այսպիսով բուն իսկ իրականութեան քննութիւնը մեզ ցոյց է տալիս, որ մեր n-ն եղած է vo: Բայց ե՞րբ. այս է խնդիրը: Որովհետեւ «անցեալում» vo լինելն ապացուցել, դեռ չի նշանակում ապացուցել որ Ս. Մեսրոպի ժամանակ եւս vo էր մեր n-ի հնչումը: «Անցեալ» առածը 1500 տարի է. անհարին չէ, որ Ս. Մեսրոպի ժամանակ n-ն հնչէր ուրիշ կերպ քան այսօր: Փորձինք լուծել նաեւ այս խնդիրը:

Եթէ այսօր մի Փրանսացու առջեւ արտասանենք «ոսպ» եւ խնդրենք, որ գրէ այդ բառը. նա կր գրի. «vosp», որով պարզ է թէ օտար ախանջի համար մեր n-ն շատ որոշ vo է այսօր: Արդ այս ինչպէս կարող էր լինել, որ Ս. Մեսրոպ լսելով «vosp»՝ vo ձայների համար մի գիր հնարէր. կամ փոխանակ ու-

⁷ hw → f փոխանցումը նկատելի է նաեւ ուրիշ լեզուների մէջ. այսպէս՝ նոր բրիտաներէնի եւ հին իրլանդերէնի մէջ. տես J. Vendryes, Le Langage, էջ 57:

սուցանելու, որ «ոսպ» գրեն՝ պարզապէս չի հրահանգած, որ գրեն «վոսպ», քանի որ նրա սուր ախանջը տարբերած էր մեր v ձայնը եւ դրա համար յատուկ գիր էր հնարած — վ: Այստեղից պարզ է, որ մեր vo արտաբերութիւնը դասական չէ: Այս արտաբերութեան բաղադիր ձայները Ս. Մեսրոպ կարող էր գիւրապէս լուծել, քանի որ շատ լաւ ճանաչում էր վ ձայնը:


Բաղէչցին չի արտաբերում ոսպ (vosp) կամ փոր (phor), այլ ոսպ, phor: Այս արտաբերութեան մէջ n ձայնը անլուծելի է: Նա մաքուր օ չէ եւ ոչ որոշ vo, այլ մի անորսալի ձայն է, որ սկսում է իբր անորոշ u, մի տեսակ վ եւ վերջանում է իբր անորոշ oa, այնպէս որ մի տեսակ vo ձայների ձուլում էր վ ձայնը, որ սակայն մաքուր օ չէ, այլ կարծէք դուրս է գալիս u ձայնի միջից. կամ լաւ եւս՝ կարծէք մէկը պատրաստուած է u արտաբերելու, եւ հազիւ սկսած՝ փոխած է միտքն ու արտաբերած է օ: Սա ոչ u է, ոչ a, ոչ օ, այլ նրանց ձոյլ արտաբերութիւնն է: Զարմանալի չէ, որ Ս. Մեսրոպի սուր ախանջը այս ձայնը լուծելու անօր է եղած եւ այդ խառնածին ձայնը, որ եռանդէմ է, բայց իբր մի ձոյլ ամբողջ է դարձում ախանջին՝ նա դրոշմած է մի գրով: Այսօր իսկ եթէ մէկը փորձէ յատուկ այբուբէն հնարել Բաղէչի բարբառի համար, ստիպուած է մի գիր տալ այդ արտաբերութեան: Արդ՝ ես կարծում եմ, որ Ս. Մեսրոպի ժամանակ մեր n-ն այդ անորոշիւ ձայնն ունէր, որի երանդը սակայն մօտ էր օ-ին: Օտարների մաքրահնչուն օ-ի դէմ Ս. Մեսրոպ միմիայն այս ձայնը կարող էր գնել. մեր օ-ն այն ժամանակ դեռ եւս aw էր, իսկ օ-ի երանդն ունեցող ուրիշ ձայն չկար Ս. Մեսրոպի խօսած լեզուի մէջ: Այստեղից հետեւում է, որ դասական արտաբերութիւնը պահած են այն բարբառները, որ բառի սկիզբն ու մէջը մեր n-ն արտաբերում են իբր vo: Հետեւում է նաեւ, որ vo եւ օ արտաբերութիւնները յետագայ հոլովոյթի արդիւնք են:

Հոլովոյթի տեսակէտով մենք նկատում ենք, որ բառապիղքն ու բառամէջը միօրինակ չեն ազդած n ձայնի վրայ: Բարբառներն

այս տեսակէտով երեք խումբի կարելի է բաժնել. կան որ անվթար են. եւ բոլոր գիրքերում vo ունին. կան որ լիապէս փոխուած են եւ բոլոր գիրքերում օ ունին. կան որ կէս ձամբին են. սկիզբն ունին vo (ոչ vo) եւ մէջը օ/Այդպէս է բանուկ լեզուն՝ — եկեղեցական գրարարը եւ մեր երկու դրական լեզուները: Կարող ենք ասել ուրեմն, որ vo արտաբերութեան vo-ի անցումը կատարուած է գրերի գիւտից յետոյ եւ որ բառերի մէջ աւելի շուտ է vo-ն լերկացած եւ օ դարձած քան բառասկիզբին: Այս երեւոյթի պատճառը բառամէջն ինքն է:

Մենք այսօր, մեր իսկ ախանջով կարող ենք նկատել այդ փոխանցման ընթացքը: Մենք որոյ բառն արտաբերում ենք. voró. Մենք որոյ բառն — vasən: Եթէ այս երկու բառերն արտաբերենք առաջինը երկրորդից յետոյ, բայց անջատ՝ մենք գիւրութեամբ կարող ենք ասել. «վասըն որոյ»: Բայց եթէ այս երկու բառերից կազմենք մի արտաբերական միաւոր, այսինքն արտասանենք իբր մի բառ եւ արտաբերումը տրոհենք իբր «վաս ֆորոյ», այն ժամանակ «որոյ» բառի առաջին n-ն կ'ընկնի բառամէջ եւ կ'արտաբերուի օ. vasonó: Ինչո՞ւ. որովհետեւ շատ դժուար է արտաբերել nvofo. այս խումբը մենք գիւրութեամբ կարող ենք արտաբերել իբր nəvoro (նըօրօ), բայց նըօրօ բառ չկայ եւ ոչ վաս բառ ունինք: Իմաստի բռնադատութիւնը մի կողմից եւ արտաբերութեան բնական միտումը միւս կողմից մեզ ստիպում են յապաւել vo ձայնի v կցորդը եւ արտաբերել միայն օ-ն: Այստեղ գործում է ուժի խնայողութեան տիեզերաստ օրէնքը. շատ աւելի դժուար է արտաբերել nvofoog կամ nvofoog, քան norog (նորոգ): Բառասկիզբին այս դժուարութիւնը նուազ դժուար է. համարեա նոյն գիւրութեամբ կարելի է արտաբերել եւ voosp եւ vosp (ոսպ), բայց աւելի դժուար է ասել voosp քան vosp, ուստի արտաբերութիւնը բունած է գիւրին ձամբան եւ vo հնչում է յետագային vo. որովհետեւ vo արտաբերելու համար պահանջում է երկու շուրթերի պրկում, իսկ vo արտաբերելու համար միմիայն վարի շրթունքի թեթեւ շարժումը բաւական է: Այսպիսով մենք կարող ենք ասել վտասուութեամբ գծել n ձայնի հոլովոյթի ծիրը իբր vo → օ: Նկատենք այստեղ, որ այս ծիրի վրայ միջին

կայանք պատմական փաստ է. մենք այսօր ունինք VO հնչումը. բայց այդ կայանն անխուսափելի չէ: Պէտք է կարծել, որ զՅՕ դարձած է Օ անցնելով VO փուլից: ՄՅՕ արտաբերումից հնարաւոր էր անցնել ուղղակի դէպի Օ՝ կցորդ ձայնի մեղմացումով եւ չքացումով: Ուստի մենք կարող ենք հստակացնել աւելի հաւատարիմ ծիր դժել այսպէս.



Տարբեր լեզուական միջավայրեր կարող էին ունենալ տարբեր փուլերից անցնող հոլովոյթ: Որ հին զՅՕ-ն դարձակ է VO՝ դա. փաստ է. այսօր հնչում ենք VO: Որ զՅՕ-ն իբր վերջնական արդիւնք տուած է Օ, այդ եւս փաստ է, քանի որ այսօր ունինք բարբառական Օ հնչումը բառի սկզբին ու միջին: Որ զՅՕ հնչումը տեղ-տեղ VO-ի կայանով է անցած բառամէջերին՝ դրա ապացոյցը հո խմբի ֆօ արտաբերումն է մի երկու բարբառում, որ արդիւնք է հւ ձայնների ձուլման, իսկ այդ խմբի լ-ը պատկանում է բառամիջին ու-ին: Բայց որ անկարելի էր զՅՕ-ից ուղղակի անցնել Օ-ին՝ այդ բանը պնդելու համար բաւարար հիմքեր չկան:

Ո ձայնի յետագայ լերկացումը դուգահեռ է մեր Ե ձայնի լերկացման: Երեւանցիներ այսօր ասում է. էրէս (երես): Մենք այս արտաբերութիւնը չենք կարող հիմք առնել եւ ասել, թէ մեր Ե-ը մի հին է է, որ յետագային իբր կցորդ ստացած է մի յովա: Ծիւղէ այդպէս մենք չենք կարող ասել թէ մեր ու-ն, որ այսօր բառամէջերին եւ բառասկզբին հնչում են Օ, այդպէս եղած է եւ հին ժամանակ եւ որ նրա V կցորդը յետագային միայն ընկերացած է նրան: Մեր մանր հետազոտութիւնը ցոյց է տալիս, որ ճիւղէ հակառակն է ճշմարիտ. որ մեր ու-ն եղած է դասական շրջանին զՅՕ, որ յետագային լերկացած է կա՛մ ուղղակի, կա՛մ նախապէս հնչուելով իբր VO:

Այստեղ պէտք է քննութեան առնենք մի մասնաւոր խնդիր, որ կապ ունի զՅՕ —> VO փոխանցման հետ: Դա այն միջին կայանն է, որի վրայով զ դարձած է V: Մ ձայնը առաւելապէս U (ու) ձայնի երանդ ունի, մինչ-

դեռ V ձայնը պարզապէս բաղաձայն է: Այս անցումը ձայնաւորից դէպի բաղաձայն միջին մի փուլ է ունեցած, որ W ձայնն է, մեր լ-ը: Այս ձայնը մի տարբերակն է զ ձայնի. սրանց տարբերութիւն այն է, որ զ-ն միտած է դէպի U, իսկ W-ն՝ դէպի V, այնպէս որ մէկից միւսին անցնելու ճամբան կարելի է այս տարազով արտայայտել. զՅՕ — WO — VO: Մեր ու ձայնի մէջ, որի առաջին նշանը ո է, երկրորդ նշանը W ձայնի արժէք ունի եւ ծագում է նախաւոր զ ձայնից: Այսպիսով, մեր ու-ն մի հին զՅՕ է, որ յետագային դարձած է WOW, իսկ սա՛՝ VOW, ինչ որ կը տեսնենք թիչ յետոյ: Որ հին ժամանակ մեր լ ձայնը V-ի երանդ ունէր, դրա ապացոյցը ցիւք բառի վրայցական փոխառութիւնն է: Վրացին լսած է ոչ թէ ու-ին մօտեցող մի ձայն, այլ վ-ին մօտեցող մի հնչիւն, ուստի տառադարձած է nivth-i (նիվթի): Սա չի նշանակում, որ մեր լ-ը ճիւղէ եւ ճիւղէ վ հնչիւնն է ունեցած, ինչ որ ունի այդ գիրը այսօր (հմտ. թիւ, հաւատ). բայց դա անկասկած ցոյց է տալիս, որ լ-ը վ-ի երանդ ունէր վրայցական փոխառութեան ժամանակ: Այսպիսով WO արտաբերութիւնը ծագած է զՅՕ-ից եւ անցած է դէպի VO: W —> V փոխանցումը սովորական երեւոյթ է շատ լեզուների մէջ:

Անցնենք հիմա ու ձայնի քննութեան: Այսօր նա մի շատ պարզ հնչիւն է, ինչպէս մեր է-ն: Գրում է երկու տառով ո եւ լ, որոնցից ամէն մէկը իր տեղն ունի մեր այբուբենի մէջ եւ իր յատուկ հնչումը (ո — VO, լ — V): Ո՞րն է եղած այս գրախմբի դասական արտաբերութիւնը. ո՞ւր թէ մի ուրիշ բան: Ոմանք կարծում են, որ Մ. Մեսրոպ երկու գիր է տուած մեր վի հնչիւնին, հետեւելով յունարէնի գրութեան կարգին եւ մեր ու-ն համարում են յունարէնի ու գրութեան դուգահեռ: Բայց Մ. Մեսրոպի ապրած դարում յուն. ու ոչ թէ ու էր, այլ երկար ու դոց օ էր հնչում, հետեւապէս համարժէք չէր մեր ու ձայնին, եթէ կարծում են, որ դասական շրջանին նա մի պարզ ու էր⁸:


⁸ Ատտիկական բարբառն ու գրութիւնը երեք տեսակ օ ունէր. կարճ ու դոց օ, որի նշանն էր օ. երկար ու դոց օ, որի նշանն էր օւ եւ երկար ու դոց օ, որի նշանն էր օ: Այս գրութիւնն էր որ ընդհանրացաւ: Տես A. Meillet et J. Vendryes, Traité de

Մ. Մեսրոպի այբուբենի սկզբունքն է. մի հնչիւնին՝ մի՛ գիր: Ինչ որ այսօր «երկբարբառ» է կոչուած, նրա ժամանակ երկու ձայն ունէր՝ անջատ եւ որոշ: Իւ-ը՝ iw էր, բայց լ-ը լիովին v չէր, ուստի յատուկ գիր ստացաւ. այդպէս նաեւ՝ աւ, այ, եւ, եա: Ու գրութեան երկու գիրն ինքնին ապացոյց է, որ Մ. Մեսրոպ մաքուր ու ձայն լսած չէ: Այն որ այսօր մի պարզ ձայն է, նրա ժամանակ երկու ձայն էր. մի ու եւ մի լ: Այն հանդամանքը, որ ու + լ յետագային ձուլուելու դարձել են մի պարզ ու, շատերին այն պատրանքն է տուած, որ մեր ու-ն միջառ պարզ ձայն է եղած: Բայց պէտք է մոռանալ, որ ձայները նոյնպէս ունին իրենց պատմութիւնը, ինչպէս ամէն բան այս աշխարհում: Այն ինչ որ յաճախ մեզ թւում է պարզ, քննութիւնը ցոյց է տալիս, որ բաղադր է ինչպէս շուրը, որ թաղէսը կարծում էր տարր, բայց երեւաց որ նա մի H²O է: Մ. Մեսրոպ լուծած է դասական ու արտաբերութիւնը եւ իր սուր պահանջով ըմբռնած է, որ դա երկու ձայն է. մէկը՝ ո, միւսը լ, ուստի եւ իր ժամանակի ու-ն նա արտայայտած է ո եւ լ գրերով:


Այն հանդամանքը, որ մեր ու գրութեան առաջին տարրը ո է, մեզ բերում է այն եզրակացութեան, որ Մ. Մեսրոպ լսած է զՅՕ: Իսկ մեր լ-ը տեսանք, որ մի W էր. հետեւապէս մեր ու-ն դասական շրջանին հնչում է իբր զՅՕ, եւ ուրեմն, մեր «առն» բառն օրինակ՝ հնչում էր tɛwɔn: Այսպիսով մեր ու-ն մի երկբարբառ էր — զՅՕ, իսկ ու-ն մի եռարարառ՝ — զՅՕW: Ինչպէս զՅՕ ձայնը՝ հոլովոյթի ընթացքին դարձած է VO, սպասելի է, որ մեր ու-ն եւս զՅՕW վիճակից անցած լինի VOW (վու) վիճակին: Այդպէս եղած է իրօք. ունինք բարբառական «վո՛ւր» արտաբերութիւնը «ո՛ւր» բառի համար (հմտ. վո՛ւր կ'երթաս): Այս արտաբերութեան մէջ V ձայնը ոչ թէ նոր կազմութիւն է, այլ հնութեան մի մնացորդ է, որ դեռ չի կորել:

Մենք այսօր չենք արտաբերում WOW կամ զՅՕW, այլ մաքուր ու. բազմարարառը պարզուած է ե՛ւ բառի միջին, ե՛ւ բառի վերջին, ե՛ւ բառի սկզբին (ոււ, մուկ, հատու):

Գոյր լեզուների հնչարանութիւնը ցոյց է տալիս, որ մերձաւոր ձայներով կազմուած երկբարբառները միւսներից աւելի շուտ են պարզուած: Այսպէս՝ յոնիական բարբառում դեռ եւս ֆ. Ա. Ե. դարում էի դարձած էր ε, օս-ն՝ օ: Բէնովական բարբառում էի հնչում էր i, ai — η, իսկ օi — υ (ü): Նոյն երեւոյթը նկատուած ենք նաեւ մեր լեզուում, ուր հին զՅՕW եւ յետագայ WOW՝ որ մերձաւոր ձայններից են կազմուած, դարձած են VOW եւ ապա՝ u (ու). իսկ Արցախի բարբառում նաեւ ü (հմտ. բուն [բոյն] — pün): Գիտենք որ ոյ եւ ու ընդդէմ են. այս հիման վրայ մենք կարող ենք գուշակել երկու քոյր լեզուների հնչական հոլովոյթը.



Մեր քննութեամբ հասանք մինչեւ մեր դասական շրջանը, մինչեւ Մ. Մեսրոպ: Նախ քան աւելի խորերն անցնելը՝ մի անգամ եւս զուգարենք մեր հետազոտութեամբ ձեռք բերած տարազները.



Ինչպէս տեսանք Մեսրոպեան արտասանութիւնն էր ո գրի համար զՅՕ, ու գրութեան համար զՅՕW (ոչ զՅՕW. այս խմբի հոլովոյթը մի քայլ առաջ էր անցած Մ. Մեսրոպի ժամանակ եւ երկրորդ զ-ն պարզուած էր իբր V-ին մօտեցող մի ձայն, իբր մի W):

(Շարունակելի է) Ն. ԱՂԲԱԼՅԱՆ



la gramm. comp. des langues classiques, էջ 99, § 151:

⁹ Տես A. Meillet, Traité, էջ 99, § 152: